



## ԽՈՐԱՑՐԵՔ ՁԵՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

1985 թ. Վիեննայում մի շարք պետություններ ստորագրեցին «Օզոնային շերտի պահպանության մասին» կոնվենցիան: Այն 1999 թ. ստորագրել է նաև Հայաստանի Հանրապետությունը: Կոնվենցիան պարտավորեցնում է այն ստորագրող պետություններին պարզաձև միջոցներ ձեռնարկել վերահսկելու և կանխելու համար օզոնային շերտը քայքայման փանող ամեն մի գործունեություն:

1987 թ. Մոնրեալ քաղաքում ստորագրվեց «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» արձանագրություն: Ներկայումս շուրջ 200 պետություն, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունը, ստորագրել են արձանագրությունը: Արձանագրությամբ ստորագրող պետությունները պարտավորվել են դադարեցնել կամ վերահսկողության փակ առնել օզոնաքայքայիչ նյութերի արտադրությունը: Արձանագրության «Ա. հավելվածը» ներկայացնում է այն նյութերը, որոնք առանձնապես ուշադրության են արժանացել, որպես առավել վրանգավոր: Դրանք հիմնականում քլոր, ֆտոր և բրոմ պարունակող միացություններ են՝ քլորֆտորածխածինները (ՔՖԱ) և այսպես կոչված հալոնները.

### Ա ՀԱՎԵԼՎԱԾ

#### ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՆՅՈՒԹԵՐ

Խումբ	Քիմիական նյութ	Օզոն քայքայող պոտենցիալը
Խումբ I		
CFCL <sub>3</sub>	(ՔՖԱ-11)	1.0
CF <sub>2</sub> CL <sub>2</sub>	(ՔՖԱ -12)	1.0
C <sub>2</sub> F <sub>3</sub> CL <sub>3</sub>	(ՔՖԱ-113)	0.8
C <sub>2</sub> F <sub>4</sub> CL <sub>2</sub>	(ՔՖԱ-114)	1.0
C <sub>2</sub> F <sub>5</sub> CL	(ՔՖԱ-115)	0.6
Խումբ II		
CF <sub>2</sub> BrCL	(հալոն-1211)	3.0
CF <sub>3</sub> Br	(հալոն-1301)	10.0
C <sub>2</sub> F <sub>4</sub> Br <sub>2</sub>	(հալոն-2402)	որոշվում է

Այս ձեռնարկումներն արդեն իրենց պրոտոները փայլա են: 1996 թ.-ից լրիվությամբ դադարեցվել են քլորֆտորածխածինների արտադրությունը: Ներկայումս նկատվում է, որ օզոնային ճեղքը դանդաղ փակվելով սկսում է փակվել: Նրա լրիվ անհետացումը կանխատեսվում է որ փեղի կունենա 2060 -ականներին:

Օզոնային շերտի բարակումը կանխելու համար անհրաժեշտ է կիրառել մի շարք պաշտպանական միջոցառումներ, ինչպիսիք կարող են լինել.

- արդյունաբերության մեջ անցումը էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների և նյութերի օգտագործման,
- կենսական միջավայրի համար վնասակար նյութերի արտանետումների նվազեցումը կամ հնարավորության դեպքում լրիվ դադարեցումը,
- էներգիայի այլընտրանքային աղբյուրների օգտագործմանն անցնելուն ուղղված ջանքերի իրախոսումը,
- բնական էկոհամակարգերի վերականգնման և պահպանման աշխատանքների կազմակերպումը,
- բնապահպանական խնդիրներին և էկոլոգիական կենսակերպին լայն զանգվածներին ծանոթացումը: